ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 100-Ա

« 12 » ԱՊՐԻԼ 2022Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՕՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 16-րդ հոդվածի, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1611-Լ որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարզի բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման ապահովման, ֆիզիկական պատրաստականության մակարդակի, աշխատունակության բարձրացման, ինչպես նաև ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն երիտասարդ սերնդի ձևավորմանը խթանելու նպատակով 2022 թվականի ապրիլի 22-ը հայտարարել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, առողջապահության և սոցիալական ապահովության, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություններին՝ մարզի տեղական

ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, առողջապահական կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օրվա պատշաճ անցկացումը:

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

բ. Եղեգնաձոր